

Սյունիքի մարզում Ա.Դ. Սախարովի անվան հայկական կենտրոնի կողմից  
իրականացվող բարեգործական նախաձեռնության հաշվետվություն

23. 06.2020 թ.

ք. Գորիս

Սյունիքի մարզում ավարտվեց Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսի համավարակով պայմանավորված մարդասիրական օգնության տրամադրման գործընթացը: Շահառուների ցուցակները մեզ տրամադրել էին Գորիսի տարածքային սոցալական ծառայության կենտրոնը և Գորիսի, Տաթևի, Տեղի համայնքապետարանները:

Ծրագրի իրականացման ընթացքում սննդային և հիգիենիկ պարագաների ծավալուն փաթեթներ են բաժանվել.

1. Գորիսի «Համագործակցություն-Հայաստան» մարդասիրական ճաշարանի 80 այցելուներին:
2. Գորիս քաղաքի 70 ընտանիքների և Արևշատ թաղամասում տեղադրված «Դոմիկների» բնակիչներին:
3. Տաթև խոշորացված համայնք (8 բնակավայր) -50 ընտանիքների:
4. Գորիս խոշորացված համայնք (13 բնակավայր)- 50 ընտանիքների:
5. Տեղ խոշորացված համայնք (7 բնակավայր) - 50 ընտանիքների:

**Ընդամենը 300 հատ սննդային և հիգիենիկ պարագաների փաթեթ է բաժանվել նշված համայնքների 28 բնակավայրում:**

Միաժամանակ բնակչությանը տրվել է համավարակի պայմաններում որոշակի իրավաբանական տեղեկատվության: Գորիսի մասնաճյուղի աշխատակիցները տրամադրել են իրավաբանական խորհրդատվություն, բնակչությանը ծանոթացրել են արտակարգ դրության ժամանակ կիրառվող միջոցառումների, իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների, պարետի հրահանգների հետ: Տնայցերի ժամանակ տրամադրվել են խոշորատառ տպագիր հուշաթերթեր իրավական հատուկ ռեժիմի՝ արտակարգ դրության պայմաններում գործող իրավակարգավորումների մասին, ՀՀ պարետի հրամանների, որոշումների օրինակներ, կորոնավիրուսից պաշտպանվելու մասին նկարագարդ, գունավոր բժշկական խորհրդատվական թերթոններ:

Սախարովի կենտրոնին մարդասիրական օգնության տրամադրման գործընթացում աջակցել են 12 կամավոր՝ տարածքային սոցալական ծառայության աշխատակիցները, Գորիսի, Տաթև, Տեղ խոշորացված համայնքների համայնքապետերը և նրանց աշխատակազմերի անդամները: Մի քանի բնակավայրերում մարդասիրական օգնության տրամադրման խմբին աջակցել են նաև տեղական բնակչության ներկայացուցիչներ, որոնք ուղեկցել են խմբի անդամներին շահառուների ընտանիքների հասցեները գտնելու խնդրում:

Սյունիքի մասնաճյուղի կամավորները.

|     | Անուն ազգանուն              | Աշխատանքի վայրը                         |
|-----|-----------------------------|---|
| 1.  | Այվազյան Գրավիկ Շուրայի     | Գորիսի պետական<br>գյուղատնտեսական քոլեջ |
| 2.  | Ավետիսյան Նունե Նիկոլայի    | Գորիսի պետական<br>գյուղատնտեսական քոլեջ |
| 3.  | Հակոբյան Վահե Արթուրի       | ուսանող                                 |
| 4.  | Գյազունց Բենիամին Արագածի   | ուսանող                                 |
| 5.  | Ադունց Գարեգին Համլետի      | ուսանող                                 |
| 6.  | Միրզոյան Արթուր Խիկարի      | Գորիսի պետական<br>գյուղատնտեսական քոլեջ |
| 7.  | Մելքումյան Արևիկ Լենոյի     | Գորիսի պետական<br>գյուղատնտեսական քոլեջ |
| 8.  | Տոռոզյան Աննա Կամոյի        | Գորիսի պետական<br>գյուղատնտեսական քոլեջ |
| 9.  | Դոլունց Արամ Ռազմիկի        | ուսանող                                 |
| 10. | Սնեցունց Կորյուն Արայի      | ուսանող                                 |
| 11. | Ղահրամանյան Մուշեղ Գագիկի   | ուսանող                                 |
| 12. | Աղաբեկյան Մայիսիկ Սերյոժայի | Գորիսի պետական<br>գյուղատնտեսական քոլեջ |

Անդրանիկ Հարությունյան

Սախարովի կենտրոնի Սյունիքի մասնաճյուղի ղեկավար



